

5.8. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

5.8.1. 2013թ. շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2013թ. ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.8.1.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Երևան քաղաքի 5 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 8 846 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

**Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները
ք.Երևանի մթնոլորտային օդում, 2013թ.**

Որոշվող աղտոտիչների անվանումը	Դիտակայանների քանակը, միավոր	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիան, մգ/մ ³	Դիտակայանի համարը	Առավելագույն ՍԹԿ-ից գերազանցումների քանակը		Միջին տարեկան կոնցենտրացիան, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
				>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	7	0.147	2	74	-	0.021	0.05
Ազոտի երկօքսիդ	7	0.809	8	518	21	0.036	0.04
Փոշի	7	2.949	18	933	50	0.237	0.15
Գետնամերձ օզոն	7	0.197	2	18	-	0.011	0.03

Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ սարքերի միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 373 749 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 47 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 3 921 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի 1 դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 292 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: 2012թ. համեմատ փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 2 496 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

Վանաձոր քաղաքի 3 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 3 285 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.0 անգամ:

**Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները
ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2013թ.**

Որոշվող աղտոտիչների անվանումը	Դիտակայանների քանակը, միավոր	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիան, մգ/մ ³	Դիտակայանի համարը	Առավելագույն ՍԹԿ-ից գերազանցումների քանակը		Միջին տարեկան կոնցենտրացիան, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
				>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	3	0.196	3	200	-	0.031	0.05
Ազոտի երկօքսիդ	3	0.231	2	115	1	0.022	0.04
Փոշի	3	0.926	3	920	99	0.450	0.15

Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 2 490 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

Ալավերդի քաղաքի 3 դիտակայաններում և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 1 դիտակայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 3 035 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ:

**Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները
ք.Ալավերդիի մթնոլորտային օդում, 2013թ.**

Որոշվող աղտոտիչների անվանումը	Դիտակայանների քանակը, միավոր	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիան, մգ/մ ³	Դիտակայանի համարը	Առավելագույն ՍԹԿ-ից գերազանցումների քանակը		Միջին տարեկան կոնցենտրացիան, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
				>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	4	0.887	3	247	3	0.034	0.05
Ազոտի երկօքսիդ	3	0.453	2	143	13	0.020	0.04
Փոշի	2	1.481	2	620	18	0.303	0.15

Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ սարքերի միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 125 499 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.6 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 20 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 3 947 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ:

Հրազդան քաղաքի 1 դիտակայանում մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 1 072 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.5 անգամ: 2012թ. համեմատ փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 1 997 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի 1 դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար շուրջօրյա ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 356 փորձանմուշ: Մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.9 անգամ: 2012թ. հա-

մեմատ փոշու միջին տարեկան կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 1 064 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 1 456 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ սարքերի միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 31 499 դիտարկում: Մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մշտադիտարկման կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 695 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ծաղկաձոր քաղաքի տեղումներում (ձյուն) վերահսկվող որոշ նյութերի պարունակությունը, 2013թ.

մգ/լ

Ցուցանիշներ	Ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները
Ջրածնային ցուցիչ (pH)	6.6
Նիտրատ իոն	2.4010
Սուլֆատ իոն	2.7210
Քլորիդ իոն	2.2599
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (մՍիմ/սմ)	56.0
Ալյումին	0.04736
Կալցիում	4.76958
Տիտան	0.00284
Վանադիում	0.00106
Քրոմ	0.00033
Երկաթ	0.02217
Մանգան	0.00381
Կոբալտ	0.00005
Նիկել	0.00032
Պղինձ	0.00138
Մոլիբդեն	0.00032
Արծաթ	0.00001
Բարիում	0.00771
Կապար	0.00037

Վաղարշապատ, Արուսյան, Սևան, Կապան, Քաջարան և Մեղրի քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 15, 10, 15, 15 և 3 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 706, 738, 507, 1 002, 708 և 222 փորձանմուշ: Արենի գյուղի (ՀՀ Վայոց ձորի մարզ) պասիվ նմուշառման 4 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 304, Բուրաստան գյուղի (ՀՀ Արարատի մարզ) 6 դիտակետերի միջոցով` 204, Սյունիք գյուղի (ՀՀ Սյունիքի մարզ) 9 դիտակետերի միջոցով` 412 փորձանմուշ: Նշված բնակավայրերի մթնոլորտային

օդի փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում պասիվ նմուշառման 5 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 397 փորձանմուշ: Գյուղում տեղադրված կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 987 և փոշու 340 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4 400, ծծմբի երկօքսիդի համար՝ 11 154 դիտարկում: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև և ձյուն) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2013թ.

Ցուցանիշներ	Ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները
Բարձրությունը (մմ)	3.4
Ջրածնային ցուցիչ (pH)	7.09
Նիտրատ իոն	1.7040
Սուլֆատ իոն	2.0687
Քլորիդ իոն	0.8582
Ամոնիում իոն	1.2814
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍիմ/սմ)	34.9
Լիթիում	0.000101
Բերիլիում	0.000009
Բոր	0.018970
Նատրիում	0.602917
Մագնեզիում	0.194400
Ալյումին	0.053797
Կալիում	0.613470
Կալցիում	3.736639
Տիտան	0.002142
Վանադիում	0.000603
Քրոմ	0.000281
Երկաթ	0.070639
Մանգան	0.003876
Կոբալտ	0.000064
Նիկել	0.000760
Պղինձ	0.003260
Ցինկ	0.016027
Արսեն	0.000348
Բրոմ	0.002887
Սելեն	0.002039
Ստրոնցիում	0.008481
Մոլիբդեն	0.002233
Արծաթ	0.000003
Կադմիում	0.000073
Անագ	0.000099
Ծարիր	0.000268
Բարիում	0.005416
Կապար	0.000389
Բիսմութ	0.000001

մգ/լ

5.8.1.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: 2013թ. մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 41 գետերի, Արփիլճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի սահմանված դիտակետերում: Վերցված 1 152 փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ:

ՀՀ գետերի ջրի որակի քիմիական կարգավիճակը, 2013թ.

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Նմուշների քանակը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ ավազան	Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	9	1	-
			2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	12	3	Նիտրատ իոն
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	12	3	Ամոնիում իոն, նիտրատ իոն
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
		Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	12	2	-
			6	ք.Այրումից 0.5 կմ վերև	12	2	-
			7	ՀՀ պետական սահմանի մոտ	12	2	-
		Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	12	1	-
			10	Գետաբերան	12	1	-
		Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	8	2	-
			12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	11	3	Նիտրատ իոն
		Մարցիգետ	13	Գետաբերան	12	2	-
		Ախթալա	14	Գետաբերան	12	5	Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, սուլֆատ իոն
		Գարգառ	210	Կուտթան գյուղի շրջանում	11	1	-
	342		Ակունք	11	2	-	
	343		Գետաբերան	11	2	-	
	Աղստ գետի ավազան	Աղստ	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	11	1	-
			16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	11	3	Ամոնիում իոն
			17	ք.Բջևանից 1 կմ վերև	11	2	-
			18	ՀՀ պետական սահմանի մոտ	11	2	-
Գետիկ		19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	8	1	-	
		20	Գետաբերան	11	1	-	
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Ախուրյան ավազան	Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	6	2	-
			32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	7	2	-
			33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	7	2	-
			34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	7	5	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
			35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	9	2	-
	Աշոցք	36	Արտաշեն գյուղից 0.5 կմ վերև	5	1	-	
		37	Գետաբերան	6	2	-	
	Կարկաչուն	38	Գետաբերան	7	5	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	
	Մեծամոր գետի ավազան	Մեծամոր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	12	3	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	12	4	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
42			Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	12	4	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Նմուշների քանակը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ ավազան	Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	7	2	-	
			44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	8	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
			45	ք.Աշտարակից 1 կմ վերև	9	2	-	
			46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	9	2	-	
			47	Գետաբերան	12	4	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	
		Գեղարոտ	48	Արագած գյուղից 0.5 կմ վերև	6	2	-	
			49	Գետաբերան	7	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն	
		Հայկերդ	50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	6	2	-	
		Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	51	Գեղամավան գյուղի մոտ	3	1	-
				52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	12	2	-
	53			Արգել գյուղից 0.5 կմ ներքև	12	2	-	
	54			Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	12	2	-	
	55			ք.Երևանից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, ընդհանուր անօրգանական ազոտ, ընդհանուր ֆոսֆոր	
	56		Գետաբերան	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում		
	Հրազդան		225	Գեղանիստ գյուղի մոտ	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	
	Գետառ	59	Գետաբերան	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում		
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	8	1	-	
			58	Գետաբերան	12	2	-	
		Ծառաղբյուր գետի ավազան	Ծառաղբյուր	311	ք.Ծաղկաձորից վերև	12	2	-
				312	ք.Ծաղկաձորից ներքև	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
	Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Ձկնագետ ավազան	Ձկնագետ	60	Սեմյոնովկա գյուղից 0.5 կմ վերև	3	2	-
				61	Գետաբերան	6	2	-
Մասրիկ գետի ավազան		Մասրիկ	62	Վերին Շորժա գյուղից 0.5 կմ վերև	2	1	-	
			63	Գետաբերան	6	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
Սոթք գետի ավազան		Սոթք	64	Հանքավայրից 0.5 կմ վերև	6	1	-	
			65	Գետաբերան	6	2	-	
Վարդենիսի լեռներից սկսվող գետեր		Կարճաղբյուր	66	Աղբյուրաձոր գյուղից 0.5 կմ վերև	3	2	-	
			67	Գետաբերան	6	2	-	
		Վարդենիս	69	Վարդենիկ գյուղից 0.5 կմ վերև	3	2	-	
			70	Գետաբերան	6	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
	Մարտունի	71	Գեղիվիտ գյուղից 0.5 կմ վերև	3	2	-		
72	Գետաբերան	6	2	-				

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Նմուշների քանակը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Գեղամա լեռներից սկսվող գետեր	Արգիճի	73	Լեռնակերտ գյուղից 0.5 կմ վերև	3	2	-
			74	Գետաբերան	6	2	-
		Ծակքար	75	Գետաբերան	3	2	-
			76	Գետաբերան	6	2	-
		Գավառագետ	77	Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	2	2	-
			78	Գետաբերան	6	3	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեղի գետի ավազան	Վեղի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	12	2	-
			82	ք.Արարատից 2 կմ ներքև	6	2	-
	Արփա գետի ավազան	Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	10	2	-
			84	ք.Վայքից 0.5 կմ վերև	11	2	-
			85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	11	2	-
			86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	11	2	-
			87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	11	2	-
			88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	11	2	-
	Արփա-Սևան ջրատար	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	6	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	
	Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	12	1
90				Գետաբերան	12	2	-
Ողջի գետի ավազան		Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	12	1	-
			92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	12	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
						4	Մոլիբդեն, մանգան
			93	ք.Կապանից 0.8 կմ վերև	12	3	Մոլիբդեն, մանգան, վանադիում
						2	-
			94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	12	5	Մոլիբդեն, մանգան
3		Ամոնիում իոն, նիտրիտ իոն					
Արծվանիկ		Արծվանիկ	96	Գետաբերան	12	5	Մոլիբդեն, մանգան, վանադիում, սուլֆատ իոն
						3	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն
Գեղի գետի ավազան		Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	9	1	-
			98	Գետաբերան	12	2	-
Որոտան գետի ավազան		Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	11	1	-
	100		ք.Սիսիանից 1 կմ վերև	12	2	-	
	101		ք.Սիսիանից 2 կմ ներքև	12	2	-	
	102		Տաթև շէԿ գյուղից 0.5 կմ ներքև	12	2	-	
Միսիան գետի ավազան	Միսիան	103	Արևիս գյուղից 0.5 կմ վերև	10	1	-	
		104	Գետաբերան	11	2	-	
Գորիս գետի ավազան	Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	12	1	-	
		107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	12	5	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	

ՀՀ ջրամբարների, Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի մշտադիտարկման արդյունքները, 2013թ.

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	Նմուշների քանակը	Աղտոտիչների անվանումը	ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը, միավոր	Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՄԹԿ-ից, անգամ			
Արաքս	25	Սուրմալու գյուղի դիմաց	8	այլումին	8	13.9			
				վանադիում	8	9.0			
				քրոմ	8	6.8			
				մանգան	8	4.1			
				պղինձ	8	3.1			
	սելեն	3	1.1						
	26	Հրազդան գետի թափման կետից վերև	7	նիտրիտ իոն	7	2.3			
				ԹԿՊ	3	1.2			
				ԹՔՊ	3	1.2			
				այլումին	4	2.3			
				վանադիում	7	11.9			
				քրոմ	7	4.7			
				մանգան	5	2.1			
				պղինձ	7	1.9			
	սելեն	5	3.0						
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	7	սուլֆատ իոն	6	1.3			
				նիտրիտ իոն	7	6.4			
				ամոնիում իոն	7	4.0			
				ԹՔՊ	3	1.2			
				այլումին	5	2.0			
				վանադիում	7	15.0			
				քրոմ	7	4.1			
				մանգան	5	2.1			
				պղինձ	6	2.1			
	սելեն	6	2.9						
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	7	սուլֆատ իոն	6	1.4			
				նիտրիտ իոն	6	5.9			
				ամոնիում իոն	3	1.3			
				այլումին	4	1.9			
				վանադիում	6	14.3			
				քրոմ	6	3.8			
				մանգան	3	1.7			
				պղինձ	6	2.2			
				սելեն	4	1.7			
				29	ք.Ագարակից 2 կմ հարավ	12	սուլֆատ իոն	12	1.9
							նիտրիտ իոն	11	1.7
							ԹՔՊ	7	1.2
							այլումին	10	3.1
	վանադիում	12	12.7						
	քրոմ	12	4.0						
պղինձ	12	1.9							
սելեն	9	4.0							
30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	12	սուլֆատ իոն	12	1.9				
			նիտրիտ իոն	10	2.3				
			ԹՔՊ	8	1.4				
			այլումին	10	3.1				
			վանադիում	12	12.8				
			քրոմ	12	4.1				
			պղինձ	12	4.3				
սելեն	8	4.0							
Արփիլճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	6	այլումին	6	14.5			
				վանադիում	6	8.6			
				քրոմ	5	2.1			
				մանգան	5	4.7			
				պղինձ	6	3.7			

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	Նմուշների քանակը	Աղտոտիչների անվանումը	ՄԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակը, միավոր	Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումները ՄԹԿ-ից, անգամ
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	8	նիտրիտ իոն	5	2.2
				այոմին	8	4.1
				վանադիում	8	9.4
				քրոմ	7	2.4
				մանգան	6	4.5
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	8	պղինձ	8	1.9
				ԹԿՊ ₅	5	1.3
				այոմին	8	4.2
				վանադիում	8	3.6
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	12	մանգան	8	4.7
				պղինձ	6	1.4
				նիտրիտ իոն	12	6.2
				ամոնիում իոն	10	2.0
				այոմին	2	1.7
				վանադիում	12	20.1
				քրոմ	12	4.7
				մանգան	11	3.3
Ազատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	6	պղինձ	11	4.4
				սելեն	8	6.9
				ԹԿՊ ₅	4	1.3
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	11	վանադիում	6	14.7
				մանգան	3	1.9
				այոմին	6	1.8
Սևանա լիճ	115-119, 130-131	Փոքր Սևան	115	վանադիում	11	4.4
				մանգան	7	1.5
				պղինձ	4	1.3
				մագնեզիում	97	1.2
Սևանա լիճ	120-129	Մեծ Սևան	52	վանադիում	115	5.7
				քրոմ	96	1.8
				սելեն	60	2.5
				վանադիում	52	5.0
				քրոմ	52	2.5

5.8.2. 2014թ. հունվար ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2014թ. հունվարին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.8.2.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Երևան քաղաքի 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 800 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների (ազոտի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ և ընդհանուր օքսիդներ) և ծծմբի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 8 926, ազոտի օքսիդների համար` 2 223, ծծմբի երկօքսիդի համար` 16 622 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 48 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 352 փորձանմուշներում

ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի 1 դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 19 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ:

Վանաձոր քաղաքի 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 279 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.7 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ:

Ալավերդի քաղաքի 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ, վերցվել է օդի 233 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.7 անգամ: Ավտո-մատ սարքի միջոցով ածխածնի մոնոքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2 914, ազոտի օքսիդների համար` 2 202, ծծմբի երկօքսիդի համար` 4 374 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 5.9 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 20 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 304 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ:

Հրազդան քաղաքի 1 դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և ցեմենտի փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 91 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 160 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի 1 դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 23 փորձանմուշ: Ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Օաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մշտադիտարկման կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ:

Կապան և Քաջարան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 11 և 15 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 66 և 90 փորձանմուշ: Սյունիք գյուղի (ՀՀ Սյունիքի մարզ) 9 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 54 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլ-լատրելի նորմաների սահմաններում:

5.8.2.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: Հունվարին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 10 գետերի և Երևանյան լճի 27 դիտակետերում: Վերցված 27 փորձանմուշներում որոշվել է 40-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի քիմիական կարգավիճակը, 2014թ. հունվար

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4	Նիտրատ իոն
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3	Նիտրատ իոն
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
		Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն
			6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3	ԹԿՊՏ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
			7	ՀՀ պետական սահմանի մոտ	3	ԹԿՊՏ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	1	-
			10	Գետաբերան	2	-
		Մարցիգետ	13	Գետաբերան	3	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
		Ախթալա	14	Գետաբերան	5	Ցինկ, կադմիում, պղինձ, սուլֆատ իոն
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Մեծամոր գետի ավազան	Մեծամոր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
			42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	2	-
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ ավազան	Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	2	-
			44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
			45	ք.Աշտարակից 1 կմ վերև	2	-
			46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	3	ԹԿՊՏ, նիտրատ իոն
			47	Գետաբերան	2	-
	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն
			53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	2	-
			54	Արգելի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն
			55	ք.Երևանից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում
56	Գետաբերան	5	Ֆոսֆատ իոն, վանադիում			

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	225	Գեղանիստ գյուղի մոտ	3	Ամոնիում իոն, նիտրատ իոն
		Գետառ	59	Գետաբերան	5	Ֆոսֆատ իոն, վանադիում
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	58	Գետաբերան	2	-
	Ծառաղբյուր գետի ավազան	Ծառաղբյուր	311	ք.Ծաղկաձորից վերև	2	-
			312	ք.Ծաղկաձորից ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն

Երևանյան լճի աղտոտվածության վիճակը, 2014թ. հունվար

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները							
			Ն/ՎՊ, մգՕ/լ	Ն/ՔՊ, մգՕ/լ	Ն/ՆՄ, մգՆ/լ	Ն/ՆՄ, մգՆ/լ	Ն/ՆՄ, մգՆ/լ	Ն/ՆՄ, մգՆ/լ	Ն/ՆՄ, մգՆ/լ	
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	4.1	36	0.537	0.032	0.00159	0.00518	0.02218	0.01934